

# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ

ՄԻՍՐԱՆԻՑ ԴՊՐՈՎԱՆՈՐՑ ԱՐՄԱՆՈՒ

ՅԵՐԻ 45

ԹԻՒ 3



1896

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ

|                                   |            |
|-----------------------------------|------------|
| Տարեկան .....                     | 40 Դրոբուշ |
| Վեցամսեայ .....                   | 20 »       |
| Թղթատարութեան համար տարեկան ..... | 10 »       |

Հատով ՄԵԿ Դրոբուշ

Կ. ՊՈԼԻՍ

Տպագր. ՄԵՐԻՆԻՑ Լրագրոյ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԹՈՒՂԹ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՍՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐԻ ՀՕՐ-  
Ս. ՍԱՀԱԿ ՆԻ Ս. ՄԵՍՐՈՊ ..... Ե. Վ. ԴՈՒՐԵԱՆ  
ԴԲԻՍՏՈՆԻՈՒԹԵԱՆ ԲԱՐՔՅԱԿՆԵԸ ..... ԲԱԲԳԷՆ Վ.  
ՆԵՍՆ ԽՆԴՐԵԼ ՅԵՍՈՒՍԷՆ ..... ԽՈՍՐՈՎ Վ.  
ԵՍՆՈՆԻ ԵՆԴՂՆՅԻՈՑ ..... ՄԱՇԹՈՑ Վ.  
ԽԱԳԱՂՈՒԹԻՒՆԸ ՓՈԹՅՐԵԻՆ ՄԻՋ ..... ՄՈՒՇԵՂ Վ.  
ԴԱՂՈՒՄԻՔ ..... ԹԷՆ  
ԱԶԴԱՅԻՆ ԵՒ ԴԱՂԱՔԱՆԱՆ ԼՈՒՐԵՐ

Բաժանորդագրուածեանց, ծանուցմանց եւ այլ մանրա-  
մասնուածեանց համար դիմել առ

Տնօրէնո՞ւծ իւրն ԱՔԵԻԵՆՔ Լրագրոյ  
Ղալաթիա, Նորասուցկեան — Խան

Նիկովիդիոյ գործակալն է Մինաս Էֆէնտի Ս. շնեան,  
որ միանգամայն Դպրեվանուց գործակալն է:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՔ

Թէ՛ մայրաքաղաքիս եւ թէ՛ գաւառաց համար բաժա-  
նորդագինք կանխիկ կը վճարուին:

Բաժանորդագրուած իւրք կ'սկսին իւրաքանչիւր ամսոյ  
1 ին կամ 15 ին:

# ՄԱՍԻՍ

## ԿՐԾՆԱԹԵՐԹ

ԽՆ. ՏՍՐԻ

15 ՅՈՒՆԻՍ 1896

ԹԻՒ 3

ԹՈՒՂԹ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐԿ ՀՅՐ



Ամեն. Ս. Պատրիարք Հայրն, ներկայ կրօնաթերթիս հրատարակութեան համար եղած առաջարկութեան հաւանելով, հաճած է օրհնութեան նամակով մը քաջալերել զայն, և միանգամայն բոլոր ազգայնոց աջակցութիւնը հրաւիրած է նիւթական և բարոյական միջոցներով օգնելու անոր զարդացման: Խմբագրութիւնս պիտի ջանայ թէ՛ եկեղեցական պաշտօնէութեան և թէ՛ ժողովրդեան կողմէ ցուցուած խրախուսանքին և համակրութեանն արժանացնել թերթիս հրատարակութիւնը ամեն կերպով: Շնորհակալութեամբ կը հրատարակենք Ամեն. Ս. Պատրիարք Հօր նոյն թղթոյն օրինակը, համակերպելով ըստ ամենայնի մեզ ցուցուած կրօնական և եկեղեցական ուղղութեան:

ՊԱՏԻԱՐԳԱՐԱՆ ՆՍՅՈՅ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

1 Յունիս 1896.

Համար 298

Գերապատիւ

Տէր Մադաքիա Մ. Եպիսկոպոս Օրմանեան

Փոխ-Վանահայր եւ Վերատեսուչ Դպրեվանդաց Արմաշու

Գերապատիւ Սրբազան Եղբայր ի Քրիստոս

Ստացանք Ձեր Սրբազնութեան տարւոյս Մայիս ամսայ 19 թուականաւ և 520 համարաւ առ մեզ յղած գիրն, որով կ'ծանօթացնէիք մեզ, թէ Դպրեվանդք ձեռնարկած է շարթովական կրօնական թերթի մը հրատարակման:

Աղբայրն կրօնական թերթի մը հրատարակութեան պէտքն արդէն ի վաղուց զգալի եղած է աղբիս մէջ, թերթ մը, սրոյ նպատակը լինի քրիստոնէական կրօնի սէրն արծարծելու, բարեպաշտութեան ոգին վառ պահելու և Ս. Աւետարանի բարոյականի վեհ սկզբունքները ծառայելու ժողովրդեան մէջ. հետեւաբար այնպիսի թերթի մը պարունակութիւնը պէտք է որ ամենայնիւ համաձայն լինի Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ Ս. Աւետարանի ուղիղ բարոյականին և Մեր Առաքելական Ուղղափառ Ս. Եկեղեցւոյ դաւանութեան, աւանդութեանց և ծիսից. բնական է որ հոգեւշահ և բարոյալից յօգուածներ պարունակող կրօնական թերթ մը կ'նպաստէ զարգացման հոգեւոր կենաց մեր սիրելի աղբայրոց:

Գոհ եմք և ուրախ, որ Դպրեվանդք այս անգամ կ'ձեռնարկէ կրօնական թերթի մը հրատարակման ի հո-

դեւոր շինութիւն որդւոց Առաքելական Ուղղափառ Ս. Եկեղեցւոյ , և վստահ եմք որ մեր ազգը վայելելով այդ օգտակար ձեռնարկին արդիւնքը չպիտի զընայ նուիրել իւր բարոյական և նիւթական աջակցութիւնն ի քաջալերութիւն :

Կ'մտզթենք ի Տեառնէ բարեյաջողութիւն անընդհատ շարունակութեան այդ կարեւոր ձեռնարկին , և օրհնելով Ս. Մենաստանիդ Պատ . Գրատէր Միաբանութիւնը՝ կ'յանձնեմք շնորհաց Հոգւոյն Սրբոյ , որպէս զի թերթին յօդւածոց խմբագրութեան գործը , զոր ստանձնած է , կարենայ յաջողութեամբ վարել և ի գլուխ հանել :

Հուսկ ապա կար և զօրութիւն կ'հայցեմք Ձեր Արքայնութեան և Արժ . Տէր Եղիշէ Ծ . վարդապետի Դուրեան՝ Սիրելւոյ մերում ի Քրիստոս , որ թերթին ուղղութեան վերին հսկողութիւնը կատարելու պաշտօնն ստանձնած էր :

Աջն անեցին Աստուծոյ զօրավիգ լինի Ձեզ

Մնամք ազօթակից

Պ . Կ . Մ Ա Տ Թ Է Ո Ս

## Ս . ՍԱՀԱԿ ԵՒ Ս . ՄԵՍՐՈՊ

Դժուարին է քանի մը սոցերով պատկերացնել կամ նկարել այս երկու մեծ դէմքերն՝ որոնց վրայ տմեն տարի նոր նոր ճատ աղայլմներ կ'աւելնան՝ զոնտք գեղեցկապէս ալլակերպելու չափ : Սակայն և այնպէս՝ սրբանաղ ժամանակն հեռացնէ զոնտք մեզմէ , միշտ միեւնոյն բնաանի թերափներն են տնտք մեր սրտին պաշտելութեանը մէջ , ու հիմա իրենց տօնին յիշատակովն հպարտացած՝ ուժգին բարախումներով կ'օղջունենք զիրենք :



իրենց կեանքն ու գործը ազգայնութեան մը գերա-  
զանց արտափայլումն ունեցաւ. իրենց կը պարտինք մեր  
գալութեան ամենէն պերճախօս էջերը. իրենք եղան  
մայրենի Եկեղեցւոյն կրկնակ սիւներն՝ Յարութիւնն ու Բողոք՝  
հաստատութիւնն ու գործութիւնը: Մէկն հայրապետական  
աթոռի՝ միւսը նահապետական արօրի մը մօտ ծնած՝ ահ,  
ինչպէս յաջողեցան վերանալ հաւասար բարձրութեան  
մը՝ ուր Սինայի մը չափ սրտառում կայ և Թափօրի մը չափ  
սքանչացում:

Գաղտնիքն այն է որ երբեմն երկուքն ալ տաք տաք  
արցունքներով իրարու հետ լացին, հո՛ւր հո՛ւր երազ-  
ներով մէկտեղ հմայեցին, սո՛ւրբ սո՛ւրբ մրմունջներով  
մէկտեղ աղօթեցին. և ինչո՞ւ այս ամէնը. — որպէս զի  
Աստուծոյ հայեցէն իւր. որպէս զի օտար լեզուներու (յու-  
նարէն և ասորերէն) խղճըրտիւնէն թմրած՝ չորս հարիւր  
տարիներէ ի վեր Աւետարանին ծառայող ժողովուրդը  
Աստուծոյ տաճարէն դուրս չեկնէ այնպէս՝ ինչպէս իր  
նախնիքը կ'եկնէին Արմատիւրի սօսներուն անտառէն,  
սօսափնէն ու սարսափ տանկով իրենց հետ քան թէ սի-  
րոյ երկնային թղթում մը. որպէս զի Լուսաւորչի դա-  
ւակներն հոգեկան զմայրումով ողջունէին Յաւիտեակա-  
նին մէկ նոր Յայանութիւնն ալ՝ հայեցի բառերով ու  
չեղանքով, ու անոնց համար նորագոյն Ուխտի մը չափ  
արժէք ունենար այն: Ա՛լ այնուհետեւ թերեւ օտարո-  
տի բան մը պիտի չունենար Աստուծոյ:

Այս խորհուրդով և համոզումով մեծ ընտանիքին  
զոհարար այդ հայրերն՝ հոյ գրեհաւոր՝ իրենց գրչին  
առններն իրարու շփելով կրօնքի սրբազան կրակը ան-  
գամ մ'ալ վառեցին, ու անոր լոյսէն շլացած՝ իրաւունք  
ունեցան այնպէս երեւելու ինչպէս կ'նկարագրէ զիրենք  
մօտէն գիտող երջանիկներէն մին (Կորնէն)՝ «ո՛չ այնպէս  
զուարճանայր Մովսէս յէջս Սինեական լեռին», — Ի՛նչ  
անպատում՝ խնդութիւն ամենուն սրտէն կ'յորդէր, երբ  
երկնատուր հանճարներուն գիւթութեամբը ՎՍՊԱՅԱՐ

մարդարէական դասով , Պօղոսը առաքելական գունդով հայաբաբէս և հայերէնախեւ եղան» :

Այս գեղեցիկ յաջողութեան արդիւնքը տակաւին նոյն այն բերկրանքով կ'համակէ զմեզ . ամէնքս ալ փորձն առած ենք այդ գերադասի վայելքին . Գլխի գիւտն ու Աստուածաշունչի թարգմանութիւնն մօզական արուեստն եղաւ այդ երկու Մեծ հոգիներուն :

Հոս պահ մը կանգ առնունք սակայն , և երկու կա-  
րեւոր կէտերու վրայ դարձնենք մեր ուշադրութիւնը :

Նախ՝ չկարծենք թէ իրարմէ անբաժան յիշատակ-  
ուող այս երկու անձնաւորութիւններն՝ պիտի կարեն այն  
առանձին մնալով օգտակար ըլլալ ա'յնպէս՝ ինչպէս կը  
գնահատենք այսօր իրենց մատուցած ծառայութիւնը :

Պէտք է խոստովանիլ թէ առանց Մեսրոպի՝ դուցէ  
Սահակ իր տոհմին բոլոր ազնուականութեամբը , իր  
հայրապետական պաշտօնին բովանդակ պատկառանքո-  
վը , մշակուած մտքին լա՛յն սաւառնումներովը , անբիծ  
հոգիին ջերմ խանդաղանքներովը , չկարենար նորանշան  
լոյս մը սփռել իր դարուն վրայ . այլ՝ իր «Եւէլին հա-  
մեմատ»՝ Վաղարշապատի եկեղեցւոյն սեղանին վրայ ծալ-  
լըւած «Էքէհէլէ Նափոթը» փոշիներու մէջ թողով՝ իր պար-  
կեշտ մարմինը հանգչեցնէր օր մը Աշտիշատի հոգին տակ :  
Այն ատեն իր հօրմէն՝ Ս. Ներսէսէն՝ սա տարբերու-  
թեամբ միայն ապրած պիտի ըլլար օր՝ ժողովուրդին  
ճակատագրին առջեւ՝ հայրը միշտ Գերազի կողմը դար-  
ձաւ , իսկ տղան Գարիկինին . նա իր արդար զայրոյթ-  
ներուն մէջ անէձք ունէր , սա իր արդունքներուն մէջ  
օրհնութիւն : Այս՝ , առանց Մեսրոպի՝ հայ դպրութեան  
ընձեռած բարիքէն կէս բաժին մ'ունենալու փառքը պի-  
տի պակսէր Սահակին :

Միւս կողմէ՝ առանց Սահակի՝ Մեսրոպն ալ իր «ան-  
լոյս արգելանքի» բովանդակ հայեցողութեամբը , «աշ-  
խարհական կարգերու» բոլոր հմտութեամբը , անկրկի  
կամքին պինդ մաքառումներովը , տրտում հոգերուն

անվերջ ցաւերովը՝ դուցէ առ առաւելն՝ պարզ կրօնա-  
ւորի մը անուշ բուրումը ծաւալէր մեր պատմութեան  
քանի մը թափ/թփած թերթերուն մէջ, ու ինքը՝ «Եւլան»  
քարին վրայ թողով զիրն ու գրոցը, իր կենդանութեան  
«գետնառարած անկողինը» տանէր փռէր Օշականի մութ  
քնարանին խորը:

Երկուքն ալ որ հիմա ա՛յնքան խորին հիացումով  
կ'ըմբռնային մեր գիտակցութեան ձայնը ու երախտա-  
պարտ զգացումներու բուռն արտայայտութիւններ կ'ընեն  
մեզմէ, երկուքն ալ տառնց իրարու՝ հասարակ ձեռ-  
կանացուի մը կեանքը ապրած պիտի ըլլային. թերեւս  
իրենց նմաններ շատ պիտի գտնէինք, հիմա որ միայն  
իրարու նման են, և աննման ուրիշներու:

Յիշէ՛նք Սահակի անձն ու պաշտօնը ներկայացնող  
պատմական նշանաւոր պարագայ մը: Միտք բերենք ու-  
րեմն այն անմխիթար սուգը՝ որով համակուած երբեմն  
իր գժբախտ հօտի ախար վիճակին ու մեծամեծներու  
անմիտ խորհուրդին համար՝ շատ մը օրեր իր խուցը  
քաշուած լացաւ ու հեծկլտաց, յետոյ իր շուրջը գոռա-  
ցող անիրաւներուն տեղի տալով՝ իջաւ այն աթոռէն՝  
զոր փառասէր երէցներ կամ կեանքի տոտրիներ բռնա-  
կալեցին: Եթէ ամէնն ա՛յս ըլլար, դուցէ իրաւունք պի-  
տի ունենայինք — իր արցունքներն չմոռնալով հանդերձ —  
տարտամ գաղափար մը շինելու իր մեծութեանը վրայ:

Յիշէ՛նք նաեւ Մեարտակի կեանքէն պատմական իրո-  
ղութիւն մը: Ինքն աշխարհայինն ու գործնականը թո-  
ղած՝ առանց մեծ պատճառի՝ կ'հեռանայ վեհաշուք հաս-  
տատութեան մը յարկէն և աւագ պաշտօնէ մը, եր-  
թալ խառնուելու համար «ի կարգ միայնակեցաց», լլկելու  
համար իր մարմինը քաղցով ու ծարաւով, անքուն հըս-  
կումներով զոհելու համար գիշերներու հանգիստը, եթէ  
ամէնն ա՛յս ըլլար, դուցէ իրաւունք պիտի ունենայինք  
— իր բարեպաշտ հոգին մեծարելով հանդերձ — թեթեւ  
գաղափար մը կազմելու իր ամբողջ հանճարին վրայ:



ինչ որ ալ ըլլար ուրեմն , երկուքն ալ Մեծ տիտղոսին անարժան պիտի մնային , եթէ Պարթևա ազնուականն ու Տարօնի գիւղացին Աւետարանի բեմին առջեւ իրարու չհանդիպէին , և իրարու չգործակցէին ա՛յն չքնադարուեստովն՝ որով Տիրի մեհեանին բոլոր ճարտարութիւնը Տիրոջ տաճարին մէջ փոխադրեցին :

Երկրորդ կէտը՝ որուն մտադիր պէտք է ըլլա՛ւ ո՛չ այնչափ Առաստածաշունչի Բարձրա-Յեան գործն է՝ որչափ այն լեզուն՝ որով թարգմանեցին զայն Սահակ և Մեսրոպ : Սաո՞յդ է արդեօք ոմանց կարծիքը՝ թէ այդ լեզուն առաջին օրէն անխմանալի մնացած ըլլայ նոյն իսկ Ե. դարուն մէջ ապրող հայերուն ինչպէս հիմա : Ո՛չ մէկ ապացոյց կարելի չէ գտնել այդպիսի ենթացումեան մը հաստատութիւն տալու համար : Բայց՝ եթէ հակառակն եղած ըլլա՛ր՝ այդ մեծ վարդապետներն իրենց համբաւէն ու հրապոյրէն շա՛տ բան պէտք էր որ տուէին , եթէ իրօք չկրցան հասկնալ՝ որ ժողովուրդին կրօնական զարգացումը իր մայրենի լեզուին բնական բացատրութիւններովը միայն կրնար իրականութիւն գտնել : Սակայն՝ աւելորդ է տարակուսիլ , ա՛յդ իսկ էր «երկուց հաւասարեկոյ» իղձն ու նպատակը : Այդ թարգմանութեան լեզուն «բռնեալ ունէր , բայց ո՛չ երբեք «բռնեալ» : Գուցէ շա՛տ ետքը ձախող քայլեր առնուէին անոնց կողմէն՝ որոնցմէ մին համարձակեցաւ զրելու թէ «մեր «բռնեալ» անտեղեակ էին Սահակ և Մեսրոպ» : Ազբաւանդրիչ ճեմարանական մակացութեանց վրայ պարծալ ու մեծ թարգմանիչներէն գերի վերոյ ներկայանալու յաւակնութիւնն ունեցող այդ ծածկանուն գիտնականը ո՛վ որ ալ ըլլայ՝ (հնաճառար Սիւնեաց գալղոյին վերաբերող մը) թէ՛ ինքն ու թէ՛ իրեն տեսութիւններովն սնած միտքերն՝ Աստուծոյ խօսքը ժողովուրդին տմէն դասակարգին յարմար ու հասկնալի գործելէ գուցէ շա՛տ հեռանային , սեթեւեթեալ ու խառնակ լեզուի մը յօգուածոյ ձեւերուն տակ՝ անոնց ձեռքով թարգմանուած Ս. Գիրք

մը նոյն օրին պէտք կրնար ունենալ նոր թարգմանիչներու: Իսկ Սահակ և Մեսրոպ՝ ընդհակառակն՝ խօսուուն լեզուին համակ պարզութեամբը — շատ քիչ բացառութեամբ թերեւս — ի գլուխ հանեցին իրենց՝ հսկայ ձեռնարկութիւնը՝ հին թարգմանիչներու հարկւրումնայ դըպրոցին տառնդտկան ուղղութեանը հետեւելով:

Իսկ հիմա՞, գոհ կրնա՞ն ըլլալ Սահակ և Մեսրոպ քանի որ այդ լեզուն ա՛լ խուժդուժ բան մը դարձեր է հայ ականջներու, և զօղանջող պղնձի մը պէս կ'հնչէ այն. ալ դադրեցա՞ւ ուրեմն իրենց պաշտօնը. — բայց ինչո՞ւ մնայլ ստուեր մը կ'սահի անոնց դէմքին վրայէն: Մի՛, մի՛ խռովիք դուք, ո՛վ պատուական գլուխներ, ո՛չ մէկը կրնայ կապտել ձեր ճակտին շողերը՝ որոնք ամէն տարի պէ՛տք է որ աւելնան. վասնզի դուք բնականն ու իրականը դորձեցիք՝ այսուհետեւ ձեզի հաւատարմութեամբ հետեւողներուն ու ձեր փառքին նախանձաւորներուն կ'մնայ՝ Ձեր ու իրենց սիրած եկեղեցիին պէտքերուն համաձայն մտածել՝ ինչպէս դուք ըրիք. ա՛յն է՝ ժողովուրդին ընտանի ընել կենդանի Գիրքը, Աստուծոյ դիտութեան աղբիւրները բանալ ամենուն, մէկ խօսքով՝ շարունակել ձեր դորձը՝ առանց մատնելու զայն մոռացումի և այլայլութեան, ու անվախճան դարերու հնչեցընել ձեր անունը — ՍԱՀԱԿ ԵՒ ՄԵՍՐՈՊ:

Ե. Վ. ԴՈՒՐԵԱՆ

## ՔՐԻՍՏՈՆԵՍԻԹԵԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՐ

Բարոյականը կրօններու մէջ միեւնոյն նպատակն ունի. միջոցները, սակայն, տարբեր են ա՛յդ նպատակին հասնելու համար: Ոմանք մարմնական մահացումի (mortification) մէջ կ'կեդրոնացնեն բարոյականը, ոմանք այս ինչ

պատուէրներու կատարեալ գործադրութեամբը կ'բացատրեն զանի, եւն. և շ. Իսկ Հեթանոս փիլիսոփաներ բարոյական սկզբունքները իմացականութեան մէջ կը փնտռէին :

Քրիստոնէութիւնը տարբեր աշխարհ մը պատարասեց բարոյականի համար: Մարմնի ճնշումը, պատուէրներու անթերի գործադրութիւնը, իմացականութեան թելադրութիւնները եթէ ոչ հիմնովին փոխուեցան՝ դէթ եղանակաւ սրումներով պահուեցան: Անապատական կեանքը (ճգնաւորութիւնը), որ բուն եղաւ վանական հաստատութեան, սիւնակեցութիւնը, «ոտանաւոր տքնութիւնը» եւն. մահացումի եղանակներ են. միասիրականութիւնը, որ առաւել կամ'նուազ ուժգնութեամբ զբաւեց կրօնական միտքերը, և նոյն իսկ նշանաւոր ներկայացուցիչներ ունեցաւ քրիստոնէութեան մէջ, մոռաւոր թելադրութիւն մ'է զգացումով սահմանուած :

Քրիստոնէութիւնը աւելի ոյժ առաւ զգացումին քան իմացականութեան. և կրնանք ըսել թէ բարոյականը քրիստոնէութեան համար զգացումի գիտութիւնն է: Առաքեալները, մահաւանդ Պօղոս իւր ամենէն զգայուն բացատրութիւններով խօսեցաւ այս նիւթի նկատմամբ հռովմայեցւոյ, կորնթացւոյ, գաղատացւոյ, թեսաղոնիկեցւոյ. և Յովհաննէս, որ ամենէն թափոնցիկ զգացող մ'է, նոյնը շեշտեց իւր Կաթողիկոսոյց թուղթին մէջ :

Քրիստոնէական բարոյականի հիմն է հաստատութիւնը՝ մարդկային մտքի և կամքի կողմէն միանգամայն վստահութիւն և հպատակութիւն Աստուծոյ կամքին և խօսքերուն :

Եւ յիշուի, գիտենք Աւետարանի բովանդակ պատմութեան թէ Քրիստոս ա՛յս հաւատքը, բարոյականի ա՛յս հիմը փնտռեց միշտ. գովեց զանի հարիւրապետի բուխ սրտին (Մատթ. Բ. 10) և աեռատես կնոջ անկեղծ վարանքին մէջ (ա՛նդ. Թ. 22). ա՛յս հաւատքն էր որու մասին Քրիստոս վստահացուց իւր աշակերտներն թէ անկէ

մանանեխի հատին չափ ունենալն իսկ բաւական էր լեռները վերցնելու իրենց տեղէն և արմատախիլ ընելու ծառերը (անդ ժէ. 19. — ԻԱ. 2): Բոլոր Աւետարանում կամքը ազնուացնող հոտանք մըն է որ կ'ծառայի ծայրէ ի ծայր երբ Քրիստոս հաւատարը կ'զգացնէ իւր ունինդիրներուն և անդբաղաւնալ կուտայ անոր վրայ:

Հաւատարը իբր հիմ. քրիստոնէական բարոյականի այժ չունի ըստ ինքեան եթէ իւր արտայայտութիւնները լրման չդործեն: Այսպէս բաւական չէ՝ Աստուծոյ հաւատալ, մա'նաւանդ պէտք է զանի սիրել: Քրիստոնէական բարոյականի մէջ Սէրը (charité) Պօղոս առաքեալի բացատրութեամբ դործօն հաւատքն է. — «Հաւատք սիրով յաջողեալք» (Գաղ. Ե. 6): Եւ մեծ Առաքեալին համար ամեն մատուր և բարոյական ձիւրը «չնչ է եթէ լծակցած չէ՝ այդ քրիստոնէական սիրով: Լեզու, մարդարեւ թիւն, թափանցում խորհուրդներու մէջ, գիտութիւն, լեռները տեղափոխելու չափ զօրաւոր հաւատք, առատաձեռնութիւն, զսփոթութիւն ինքզինքը խարոյկի վրայ գնելու չափ խիզախ, և դեռ ինչ որ կ'ուզէք, այս ամենը, որ ամենէն մեծ առաքինութիւններ պէտք էին ըլլալ, «չնչ են, «եթէ սէր ոչ ունիցիմ». ատենը կրնան խափանուիլ, և «սէր ոչ երբեք անկանի». որովհետեւ «սէր երկայնամիտ է, քաղցրանայ, սէր ոչ նախանձի, ոչ ամբարհատած է, ոչ հպարտանայ, ոչ յանդգնի, ոչ խնդրէ զիւր, ոչ գրգռուի, ոչ խորհի զչար, ոչ խնդայ ընդ անիրաւութիւն, այլ խնդայ ընդ ստուգութիւն. ամենայնի տեէ, ամենայնի հաւատայ, ամենեւին յուսայ, ամենայնի համբերէ» (Ա. Կրնթ. ԺԳ.):

Քրիստոնէական բարոյականի արամադրած այս Սէրը համեմատուած է աստուածային սիրոյն հետ. մարդիկ այնչափ պէտք է սիրեն զԱստուած, որչափ նա սիրեց մարդիկը (Ա. Յովհ. Գ.):

Յոյր պատին է Հաւատարի և Սիրոյ: Աստուծոյ հա-



ւատալ, զԱնի սիրել՝ անարդիւն պիտի ըլլար ըստ Քրիստոնէական բարոյականի, եթէ նպատակ մը չունենային այդպէսն ու հաւատքը: Երջանիկ և առաքինի կեանք մը, այսինքն՝ դէպի գերազայն բարին ձգտումն է Յոյսը:

Հաւատքը թէ՛ ըստ ինքեան, թէ՛ իբր Սէր և թէ իբր Յոյս, կ'կազմէ քրիստոնէական բարոյականի բուն տեսականը: Երեք ձգտումներն ալ նոյն են և մեր ըրած վերլուծութիւնը բաւական է բացատրելու անոնց ըմբռնումն և իրարու հետ ունեցած սերտ ազդերը:

Անցնինք գործնականին:

Առաքեալներն այս նիւթերու շատ ընտիր էջեր նուիրած են, որոնց մէջ կը գտնենք Աւետարանին՝ մանաւանդ Լեւան Քարազին ընդլայնումը: Արդէն գիտէք թէ այդ քարազը ամբողջ գործնական բարոյականն է Քրիստոնէութեան: Ասկէ զատ միայն Պօղոսի վրայ գիտելով քրիստոնէական բարոյականի ազդեցութիւնը՝ հեշտ է ըմբռնել գերազանցապէս գործնականը:

Քրիստոս իբր հիմնադիր կրօնի մը և Պօղոս իբր հաւատացեալ, մանաւանդ իբր մեծ գործիչը այդ կրօնին՝ ամենէն առելի կրնային արտայայտել այդ կրօնի բարոյական ոյժը: Այդ արտայայտութիւնը կ'տեսնենք անոնց կեանքի ամեն կողմին վրայ:

Քրիստոսի թուած «Երանի» ներք և Պօղոսի գլխէն անցած վշտերը կեանքի շուրջ կ'դառնան: Մարդ պէտք է ապրի, քայց դիւրին չէ՝ ապրիլ: Քրիստոս իր հետեւողներուն իր խաչը կ'առաջարկէր. Պօղոս կ'փափագէր որ քրիստոնէաներ իրեն պէս ապրէին: Քրիստոսի առաջարկը և Պօղոսի փափագը բացարձակ չէին: Անոնք կեանքի վրայ բարձրէն կ'նայէին. և առկայ բարձրէն նայիլը ամեն մարդու տրուած չէ: Ահա՛ ճիշտ այս վիճակին մէջ է որ քրիստոնէական բարոյականը կ'գործէ քրիստոնէին մէջ, — Խնչպէս կրել այն վիշտերը, որոնց կ'հանդիպի մարդն իւր մէն մի քայլին. Խնչպէս գիմադրուել այն

աղէաներուն, որոնց զսպանակը չթուշնարէ կեանքը սաղ-  
նապ կը նկատուի համակ: Բայց չենք ուզեր բաժնուիլ  
անկէ: Անոր զուարթ, ժպտուն կողմերը կ'զբաւեն մեր  
էութիւնը:

Մարդիկ կեանքի դժուարութիւնները առհասարակ  
իրարու կ'վերադրեն: Իրաւ է որ ընկերութեան մէջ ան-  
հատի մը նեղութիւնը ուրիշի մը համար դժբութիւն կը  
նկատուի. առոր վնասը միւսին չահն է: Միշտ այսպէս  
չէ՛ սակայն. յաջողութեան կամ ձախողութեան պայման-  
ները մէկէ աւելի են և ընկերաբանական տեսութիւն-  
ներով կը մեկնուին տասնք:

Քրիստոնէութիւնը միակ լաւ սկզբունք մ'ունի ա՛յս  
դժուարութիւններուն յաղթելու համար ընկերութեան  
մէջ — Երեւոյամտութիւնը.

Երեւոյամտութիւնը գործօն սէրն է, ինչպէս Սէրն ալ  
գործօն աւատքն է:

Այս բառին (Սէր) իմաստը տալիակցած է այժմ իր  
հասարակ առումին մէջ: Բայց Նոր Կտակարանում կ'պա-  
հէ իւր զօրեղ նշանակութիւնը: Տեսանք Պօղոսի ըմբռ-  
նումը, և ընթերցողին յատկապէս կը յանձնարարենք  
խորհրդածել Յով աննէս Առաքեալի Կաթողիկեայց թուղ-  
թին (Ա. Յով. Գ. 18) տողերուն վրայ: Այդ տողերը  
քրիստոնէական բարոյականի ամենէն զօրաւոր ջիղն են և  
կ'ընդգրկեն ամբողջ բարոյականը, բարոյականին պժը:

Երեւոյամտութեամբ ընկերական միջավայրի դառնու-  
թիւնները կ'անուշին. փոխադարձ և ընդհանուր համակ-  
բանք մը անհատները իրարու կ'կապէ. անխղելի կ'մնայ  
այդ կապը ամենէն ծանր աղէաներու հանդէպ: Զիրար  
կը սիրեն անոնք: Ընկերի սէրը քրիստոնէութեան մէջ  
սաուդանիչն է Աստուծոյ սիրուն: Անկեղծ քրիստոնեա-  
ներ շատ լաւ կ'զգան զայդ:

Քրիստոնէական բարոյականի այսպիսի գործնակա-  
նացումը ամենէն հետաքրքրական պատմութիւններ ու-  
նի: Քրիստոնէութեան առաջին հինգ զարերու դէպքե-

րը արտաիայուամն են քրիստոնէական բարոյականին : Եւ  
թերեւս չկայ պատմական էջ մը որ այնքան նշանաւոր  
եղած ըլլայ իւր ըմբռնումով : Քրիստոնէութեան պատ-  
մութիւնը համայնապատկերն է այդ ըմբռնումին : Եր-  
բէք համամիտ չենք ուրիշ եղանակներով բացատրելու  
քրիստոնէական եռանդին դարաւոր գործնականացումը :

ԲԱՐԳՅՆ Վ.

## ՆՇԱՆ ԽՆԴԻ ԵՒ ՅԻՍՈՒՍԷՆ

ՃԱՇՈՒ ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ

( ԺԲ. 33 — 45 )

«Յայնժամ պատասխանի ետուն նմա ոմանք ի դպրացն  
եւ ի փարիսեցոց եւ ասեն. վարդապետ, կամիմք նշան  
ինչ տեսանել ի քէն» :

Փարիսեցիք եւ Դպիրք՝ որչափ ալ Տէր Յիսուսի այնքան ա-  
ռատութեամբ եւ մասնաւոր հեղինակութեամբ գործած սքան-  
չելի հրաշքներն՝ զիւական զօրութեան եւ կամ ազդեցութեան  
վերագրելու եւ անոր քարոզած կենարար վարդապետութիւն-  
ներն եւս Աստուածային օրինաց տրամադժապէս ներհակ եւ  
անհաշտ ցոյց տալու անխոհեմ եւ յանդուգն դադարադնե-  
րով կ'ընեռնաւորէին եւ կ'ծանրացնէին իրենց միտքն , սակայն  
եւ այնպէս , այդ անխորհուրդ ընտրութիւններն ո՛ր եւ է նպաս-  
տաւոր արդիւնք մ'ընծայելու առաւելութենէն եւ երաշխաւո-

րութենէն իսպառ զուրկ կ'դառնուէին: Որովհետեւ, Յիսուսի հռչակն և համբաւն դամ քան զդամ՝ ամենուրեք կ'տարածուէր, և նոյն իսկ Պաղեստինի անձուկ հորիզոնէն անդին ալ սքանչացմամբ և վարմացմամբ կ'պատմուէր և կ'հրապարակուէր: Այդ յաջողութիւնն տարակոյս չ'կար որ պիտի վերաւորէր և խոյստէր այն հակառակորդաց սիրտերն, պիտի դրդուէր տնոնց վայրոյթն և պիտի թելադրէր զանոնք, որպէս զի նախնոր գիւտերու և հնարքներու միջոցաւ յաջողին անոր յառաջադաշտութիւնն կասեցնել և ըստ կարելոյն, յաջս ժողովրդեան անվոր և տկար մէկն ներկայացնել, որովհետեւ կատկածն և տարակոյսն հետցհետէ իրական դոյն մը կ'զգենուր և կ'վախոյնէր, թէ քիչ ասեանէն շատերն ճանչնալով անոր գերազանց և Աստուածացին անձնաւորութիւն մը լինելն, պիտի աշակերտէին անոր:

Այս շարժաւթիւնն թերադրեալ, Փարիսեցիք Յիսուսի կը դիմեն և անկէ նշան մը՝ հրաջք մը կ'խնդրեն, որպէս թէ այդ յայտարար նշանով անոր պիտի հաւատան: Յիսուսի հակառակորդաց խնդրած նշանն՝ ըստ Ղուկասու (մ.Ս. 29) է՝ *նշան յէրէից*, ուստի զիւրին է եղբայրացնել, թէ Յիսուսի երկրի վրայ կատարած հրաշալի բժշկութիւններն՝ յաջս Հրէից, անբաւական նկատուած էին զիրենք համոզելու: Յիսուս, թէ եւ անոնց պահանջումին դոհացում չ'տար, զի ոչ անոնց ներկայութեանը հրաջք կ'զործէ և ոչ ալ երկինքի վրայ տարօրինակ և արտասովոր նշան մը ցոյց կուտայ, բայց և այնպէս, անոնց հարցմանը վճռական կերպով մը կ'պատասխանէ, թէ միակ նշանն՝ որ պիտի արուի իրենց, է նշանն Յովնանու մարգարէին:

«Նա պատասխանի ես և ամէ ցնոսա, Ազգ չար և շնացող նշան խնդրէ, և նշան մի՛ տայի նմա, բայց նշանն Յովնանու մարգարէի: Զի որպէս էր Յովնան ի փոր կիտին զերիս տիւս և զերիս զիւերս, նոյնպէս եզիցի և Որդի մարդոյ ի սիրտ երկրի զերիս տիւս և զերիս զիւերս: Արք նինուէացիք յարիցեն ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ և դատապարտեցեն զսա, զի զզջացան ի քարոզութեանն Յովնանու, և արդ աւասիկ մեծ քան զՅովնան է աստ»:

Այս պատմական հատուածով, Տէրն մեր Յիսուս կ'ուզէ Հրէից իմացնել Յովնանու քարոզութիւնն ի նինուէ, յորմէհետէ:



Նինուէացիք ի հաւատաւ դարձան առանց հրաշքի: Այս առթիւ կ'գուշակէ և այն մեծ հրաշքը, որ է իւր երեքօրեայ յարութիւնն, որուն օրինակն եղած էր Յովնան մարդարէ, երեք օր ձկան փորը մնալովը, որ էր նշանակ իւր երեք օր ի դերեղմանի մնալուն: Ապա, բազմատուօթիւն մը կ'դնէ անհաւան Հրէից և Նինուէացւոց միջեւ,՝ կ'ջատագովէ վերջինները, որ Յովնանու քարոյութեամբն ապաշխարած էին, առանց խնդրելու անկէ ո՛ր և է ապացոյց և նշան. ուրեմն շատ իրաւամբ Նինուէացիք պիտի դատապարտէին Հրէից ժողովուրդը, որ Յովնանէն շատ մեծը իրենց մօտն ունենալով հանդերձ, չէին հաւատար անոր: Յիսուս այս առթիւ նմանօրինակ պարագայ մ'եւս ի մէջ կ'րեւի:

«Դիտոյն հարաւոյ յաբիցէ ի դատաւանի ընդ ազգիս ընդ սցովի և դատապարտեացէ դոս, զի եկն ի ծագաց երկրի լուս վիւնատութիւնն Սողոմոնի, և ահա մեծ քան զՍողոմոն է աստ»:

Արդարեւ, ըստ Ս. Գրոց (Գ. Թաղ. Ժ. 1—13) հարաւի այսինքն Սաբալի (\*) թագուհին այնչափ հեռաւոր տեղերէ եկած առ Սողոմոն գանձիկա տեսնելու համար և անոր մատուցած էր ոսկի, փղոսկր և ուրիշ թանկագին ընծայներ: Ըստ Յիսուսի, ինչպէս Նինուէացիք, նոյնպէս և սա պիտի դատապարտէր իրեն ժամանակի մարդիկը, որք՝ իրենց մօտ չտղացող լոյսը չ'տեսնելու համար աչքերնին կ'փակէին:

Յիսուս՝ ասոնցմէ վերջ, Հրէից ազգին ներկայ և ապագայ վիճակին վրայ հետեւեալ տեսութիւնն կ'ընէ, որ զիւսահարի մը նմանութենէն առնուած է.

«Այլ յարժամ այսն պիղծ ելանէ ի մարդոյ, չրջի ընդ անջրդին տեղիս, խնդրէ հանգիստ և ոչ դտանէ. Յայնժամ ասէ, դարձայց ի տուն իմ ուստի ելի, և եկեալ դտանէ զնա պարագորդ, մաքրեալ և յարդարեալ: Յայնժամ երթոյ և առնու ընդ իւր եօթն այլ այսս չարադոյնս քան զինքն, և մտեալ բնակէ անդ. և լինի յեալինն մարդոյն այնորիկ չար քան զսոսմինն, այնպէս եղիցի և ազգիս այսմիկ չարի»:

(\*)- «Սաբա» երկիրն կ'գտնուի երջանիկ Արաբիոյ մէջ, ի հիւսիսային ենդփակաւ: Ըստ հրէական աւանդութեան՝ այս երկրի Թագուհին հրէից կրօնն ընդունած ըլլալ:

Այս հատուածին առաջին մասերը տեղեկութիւն մը կուտան մեզ՝ դեւերու գոյութեան վրայ, և ըսուած են ի զգուշութիւն Հրէից, որք իրենց չարութեան մէջ յարատեւած ատենին, աւելի չարագոյն վիճակներու ալ կրնան ենթարկուիլ: Եթէ պատրաստականութիւն ցոյց տային, անշուշտ ի ձեռն Քրիստոսի բողբոջին կ'սրբուէին և կ'մաքրուէին, և եթէ այդ ասանձնաշնորհն եղած իսկ լինէր, անարժէք պիտի համարուէր, ցորչալի դիւին հեռանալէն յետոյ սուրբ հոգւով չ'լեցուէին: Եւ քանի որ իրենց ներքինն հոգեւոր պատրաստութիւններէ զուրկ կ'գտնուէին, չարն վազ կամ անաղան դարձեալ կուգայ անդ բնակութիւն հաստատելու համար, և այս անգամ առաջինէն աւելի ծանր կ'լինի այսպիսւոյն վիճակն, ինչպէս որ ընտկան է ենթադրել:

Յիսուսի խօսքին խմատն ո'չ թէ միայն Հրէից՝ այլ և ամեն անհատի վրայ կրնայ առնուիլ: Ամեն մարդ շարունակ հարկ անհրաժեշտ է որ իւր վիճակն փոխէ զգալապէս, և Աւետարանի ճշմարտութեան յարմարցունէ, երբ մանաւանդ առիթներ կ'ներկայանան, անզգուշութիւնն և անտարբերութիւնն չարագոյն աղէտներու և վտանգներու նախաշաւիղ կ'լինին շատ անգամ:

ԽՈՍՔԱՎ, Վ.

## ԿԱՆՈՆՔ ԵԿԵՂԵՑՒՈՅ

Շատ սովորական ճշմարտութիւն մը կրկնած կ'լինինք՝ եթէ ըսենք թէ ամէն ինչ օրէնք մ'ունի, ամեն գործ՝ ամեն հաստատութիւն օրէնքով մը կ'կառավարուի:

Եկեղեցին ալ լինելով մեծագոյն առաջնորդն մարդկային հոգեկան զգացմանցը՝ հարկաւ օրէնքի մը վրայ հիմնուած պիտի լինէր:

Այդ օրէնքին նախնական սկզբունքն արդէն իսկ Եկեղեցւոյն հիմնադիրն Քրիստոս քարոզած է, և իւր Առաքեալներն ընդլայնած են:— Ուրեմն քրիստոնեայ եղողն՝ առաջին անգամ և սոխողարար՝ պարտաւոր է հպատակիլ այդ քրիստոսադիր Հիմնական օրէնքին:

Ի՞նչ է այդ հիմնական օրէնքի էութիւնը. եթէ ո՛չ դասաւորութիւնն՝ կամ վարդապետութիւնը, քաղուած Քրիստոսի քարոզութիւններէն: Մեր հին Ս. Հայրերը՝ այդ քաղուածքը ընելով՝ և Տիեզերական ժողովներու հեղինակութեամբն կնքելով՝ կազմած են Հասարակ Հանգանակը, այսինքն «Հասարակ»-ը, որ այժմ ամեն օր՝ եկեղեցիներում կ'արտասանուի,

«Հասարակ» ի՞նչ այդ բանաձևեալ հանդամանքը՝ անվիճովութիւն և անձեռնմխելի հաստատութիւն տուած է նմա:

Աւետարանն ունի՝ բաւական առատութեամբ՝ նաև ընկերային և երօնական յարաբերութեանց օրէնքի սկզբունքներ: Եւ տակայն այս յարաբերութիւնները՝ քարոզուած հրէական մասնաւոր շրջանակի մը մէջ՝ սահմանուած էին ծառայելու բոլոր մարդկութեան և յարմարելու տեղի՝ ժամանակի և պարագայից, այդ էր Քրիստոսի նպատակը, այդպէս սովորեցուց իւր Աշակերտներուն՝ տալով անոնց բարւոք յարաբերութեանց ամենէն զեղեցիկ նախնական տարրը, և Առաքեալը՝ իրենք իսկ՝ սկսան կազմել յարաբերական օրէնքներ՝ իրենց ընդհանրական թուղթերում, բնականաբար իրենց ժամանակին նախապետական բարքերուն յարմարցնելով զայնս:

Ուրեմն Քրիստոնէական Եկեղեցւոյ երկրորդ աստիճանի օրինադիրքն կ'կազմեն Նոր Կտակարանէն քաղուած ընկերական-կրօնական յարաբերութեանց սկզբունքները:

Աւելի յառաջելով ժամանակը՝ հետզհետէ ընդարձակեցան ընկերական յարաբերութիւնները, ծնան կնճիւռներ, որոց լուծման համար պէտք եղաւ գումարել ընդհանուր ժողովներ. ասոնց դօրծը եղաւ Ս. Գրոց սկզբանաբանութիւնը՝ կամ Հիմնական օրէնք. վրայ կազմել և հրատարակել հանձններ՝ զիւրացնելու համար համատարած քրիստոնեայ ժողովրդոց կրօնական յարաբերութիւնները և առջևն առնելու համար զեղծումներու, կարծեաց տարբերութիւններու և վերջապէս անջատումներու:

Այս եղաւ ժամանակին պահանջը:

Սակայն քրիստոնեայ ժողովուրդները՝ տոհմական և տեղական զանազան բարքեր և սովորութիւններ ունենալով՝ բնական էր որ հետզհետէ՝ անզգաշապէս՝ տարբերութիւններ ըստեղծէին իրարու մէջ՝ թէպէտ ո՛չ — հիմնական . այդ տարբերութիւնները հետզհետէ մեծցան՝ և պէտք եղաւ որ ամէն երկիր և ամէն ազգ՝ իրեն համար յատուկ տեղական կանոններ ունենայ :

Հայե՛րն ալ ունեցան իրենց տոհմային եկեղեցին և երբ Հայ . եկեղեցին՝ զանազան պատճառներով՝ առանձինն իւր գոյութիւնը պահպանեց , հարկ եղաւ որ իւր մասնաւոր կազմակերպութիւնը ունենայ՝ յարմար իր տոհմային նկարագրին և՛ տեղական բարոց , և հիմնուած միշտ քրիստոսական՝ առաքելական և երեք Ս . Ժողովոց սկզբունքներուն վրայ :

Այժմ պարզուեցաւ թէ ի՞նչ է եկեղեցական կանոն ըստածը՝ միշտ ըմբռնելով մասնաւորապէս մեր եկեղեցւոյ համար , եկեղեցւոյ հասարակեց՝ իրարու հետ առնուաբան կրօնական Բարոք և քրիստոնեական յարաբերութեանց դէմ իրար դէմ :

— Թէ այս եկեղեցական կանոններն անհրաժեշտ են անպատճառ .

— Թէ չ'են՝ սահմանափակելի ազոնք մեր կրօնական զգացումներն և գործերն .

— Թէ բաւական չ'են արդեօք Ս . Գրքին սկզբունքները , և ինչո՞ւ չ'իջողունք մնացեալն՝ հաւատացեալին ազատ կամայը :

Ահա հարցումներ , որք հետաքրքիր մը կրնան զրաղեցնել :

Եւ սակայն շատ պարզ է ասոնց պատասխանը .

Ամենէն հասարակ և փոքր հաստատութիւնն անգամ՝ իւր հիմնական սկզբունքներէ՛ պատ՝ կունենայ նաեւ իւր շէրքին հոգաւորականութիւնը . անտարակուսելի է սպա : Այդ ներքին կազմակերպութիւնը ի՞նչ տարբերութիւն գոյացած է , եթէ ո՛չ շէրքին կանոնադրով մը :

Եւ եթէ չ'ինէր այդ ներքին կանոնադրը , ի՞նչպէս պիտի կարենային այդ հաստատութեան անդամներն ու վարիչներն իրարու հետ յարաբերութիւն ունենալ՝ առանց զեղծմանց և առանց բաղիտումներու :

Եկեղեցին մեր ամենէն նուիրական և ամենէն մեծ հաս-



տառութիւնն է՞, իր անդամներն են հայ ժողովուրդը՝ որ ինքն իսկ կընարէ իւր վարիչները, այսինքն եկեղեցականները:

Ինչո՞ւ ուրեմն այդքան մեծ և սուրը հաստատութիւն մը, այդքան հսկայ նաւ մը՝ պիտի մնար առանց դէ՛լի, թէ՛ւ հիմներն՝ չըջապան՝ կայմերն՝ զօրծլիքներն և ամենայն ինչ կապմ ու պատրաստ՝ ժամանակին օվկիանոսը ճեղքելու:

Այդ զեկին պատրաստութեան կանխահոգութիւնը ունեցան մեր եկեղեցւոյ նախկին Հայրերը, որչափ կարելի էր՝ յարմարցնելով ժամանակին և տեղական պահանջից:

Հայ . եկեղեցւոյ կանոններն յօրինուեցան և հրատարակուեցան քանի մը եղանակներով:

—Աղոնցմէ ամենէն յայտնի և ամենէն վաւերականներն եղան Ժողովական կանոններն:

Թէպէտ մերթ դաւանական և այլ ինդիւիդներու համար կ'ըլլամարուէին եկեղեցական ժողովներ, սակայն ստոնք պարտաւորութիւն կ'սեպէին իրենց՝ բարեկարգական կանոններ ալ հրատարակել, ժամանակի և տեղական պահանջներու համեմատ՝ զեղծումները մաքրելով և եկեղեցին բարեկարգելով:

Մեր կանոնական հաւաքիչներն ընդունած են իրենց ժողովածոյին մէջ ո՛չ միայն Հայ . եկեղեցական ժողովներու, ո՛չ միայն ընդհանուր Տիեզերական երեք Ս . ժողովներու, այլ և արտաքին եկեղեցեաց նախաքաղկեդոնական մասնաւոր ժողովոց կանոններն՝ հրատարակուած այլ և այլ քաղաքներէն, ինչպէս Լա-ոդիէիէնը, Սարդիէիէնը եւն:

Եկեղեցական կանոններու հրատարակման ուրիշ եղանակ մ'եղաւ նաեւ՝ ժողովել բոլոր հին հեղինակաւոր և մեծահռչակ մասնաւոր անհատներու յօրինած կամ անոնց վերագրուած կանոններն. այսպէս են «Առաքելական» կոչուած կանոններն, «Երկրորդ Առաքելական»ը, Թադեոս Առաքել ինը, Ս . Լա-սարգիսը, Ս . Սահակինը եւն:

—Վերջին եղանակ մ'ալ եղաւ ժողովել՝ նախկին Ս . Հայրերու յօրինած կամ անոնց վերագրուած գրութիւններէն՝ ա՛յնպիսի հասուածներ՝ որք կանոնական կամ բարեկարգական խրատ մը կ'պարունակէին, զոր օրինակ . հարցումներ և պատասխաններ, խրատական ճառեր եւն:

Այս ամէնը կ'կապմեն «ԿԱՆՈՆԱԳԻՐԻՔ» մը, որ ձեռա-

գիրներու բաղմամբիւ օրինակներ ունի զանազան թանգարաններում և զոր ջանացած է համառօտակի ամբողջել Արէլ Արքեպիսկոպոս Մխիթարեան՝ իւր «Պատմութիւն ժողովոյ» գործին մէջ (տպգր. Էջմիածին):

Պէտք չէ՝ իմանալ թէ միմիայն այն հատորին մէջ կ'պարունակին Հայ. Եկեղեցւոյ ժողովոյ և հարց հրատարակած կանոնները. կան տակաւին շատ կանոններ՝ ասկէց դուրս, որոց ամենէն կարեւոր հաւաքումն Մխիթար Գալինը:

Բիշ շատ ձեռնհասներու պարտաւորութիւնն է ասոնք ամէնը զատ զատ քննել և մեր ժողովրդեան ծանօթացնել, որպէս զի ինքն իսկ՝ այդ մեծ հաստատութեան մարմինը՝ ժողովուրդը՝ ճանաչէ անոր ամէն հանդամանքները և լա՛ւ զիտնայ թէ ի՛նչ ընթացք ունենալու է իր Եկեղեցւոյն և այդ կանոններուն նկատմամբ:

ՄԱՍԻՓՈՅ Մ.

## ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ ՓՈԹՈՐԿԻՆ ՄԷՋ

«Վարդապետ, ոչինչ է քեզ փոյթ,  
զի կորնչիմք աւասիկ»։ ՄԻԿ. Դ. 38.

Մ.

Ս. Լեւոնաբանիչներն պատմելով մեզի Յիսուսի Բրիստոսի կեանքն ու վարդապետութիւնները, նոյն կերպով նկարած են Անոր այն քանի մը տարիներն, զորս անցուց իր առաքելներուն ու ժողովուրդին հետ։ Այդ հրապարակային կեանքի նուիրուած երեք-չորս տարիներն ալ իրենց մէջ ունին հոյլ մը հրաշալի գէպեր, որ պերճաւոր վսեմութեամբ կ'փայլին, եւ իբր զիւցազնական կեանքի մը ամենէն գեղեցիկ դրուագներն կուզան. կ'հասնին մեզի՝ Անոր փրկաւոր վարդապետութիւններուն հետ։ Ունկնդիր եւ սոսկ հետաքրքիր ժողովուրդի

մը վրայ ազդելու պայմանը, ո՛չ միայն օժանուտ եւ հրապուրիչ լեզուն էր Աստուածային Քարոզչին, այլ եւ այն հոգեկան բարձր կարողութիւնը, որ մարդկայինէն վեր, նիւթականէն անկախ, երկնային բոյրն ունեցող շունչին մէջ կ'կայանայ: Այդպէս էր Տէրն մեր Յիսուս Քրիստոս, որ մարդկային մարմնի մը մէջ ծածկած էր աստուածային ամբողջ զօրութիւնն ու կարողութիւնը, իր հետ բերած երկինքէն: Իր կեանքի խորհրդաւոր վայրկեաններուն մէջ եեմէ Այլակերպութիւնը լուսաշող փառաւորումն է իր մարդկային մարմնոյն, Տիբերեայ ծովուն վրայ յուզուող փոթորիկն առեն իր խաղաղ եւ անխռով նինչն, արդիւնքն էր այն գերմարդկային կարողութեան, որ դիմագրաւել կուտայ աշխարհի փորձանքներուն, առանց երբեք մարդը վրդովելու վտանգներու երկխաղով:

Մարդերու տակը միտքը, անբաւական կ'զգայ ինքզինք, առաջին տկնարկով մը ճանչնալու այն ճոխութիւնն ու ներդաշնակութիւնը, որ պահուած կայ Աւետարաններուն խորը: Զանոնք տող առ տող քակելու համար անհուն աշխատութեան կ'կարօտինք: Յայտնութեան խորհրդաւոր խնդրոյն լուծման համար, նիւթական նշաններու պէտքը կ'զգանք: Բարոյական եւ կրօնական ճշմարտութիւններու բարձրութիւնը ճանչնալու համար առականերու հարկն անհրաժեշտ է մեզի: Քրիստոս տուաւ իր ունկնդիրներուն այդ առակն ու զգալի նշանները, որոցմէ մին պիտի տեսնենք այսօր:

Բ.

Երեկոյ մ'էր: Լեւոն Քարոզը խօսուած էր արդէն (Մտժ- ե — է): Հետաքրքիր բազմութիւն մը, լուռ ու մտախոհ, Գալիլոյ ծովուն ափունքներէն դէպի գիւղերը կ'դիմէր: Ունկնդիրներէն ամենէն եռանդոտներն աչքերնին անկած կ'հետեւէին նաւի մը, որ առաջատու պարգած հովին, կ'սահէր կ'անցնէր ջուրին խաղաղ երեսէն: Ծովն, երբեմն ծխացող հրաբուխ՝ հանդարտ մակերեսոյթ մ'ունէր: Լեւոնեւրու կանաչ զազաւները կ'ըջապատէին զայն: Խումբ մը ձկնորսներ, որք առարելութեան պաշտօնին կոչուած էին, հիացումով կ'դիտէին Մարդը, որ նոյն օրուան քարոզութիւններէն ու հրաշքներէն պարւասած, նաւին ետեւի կողմը հանդարտ կ'ննջէր, զլուխը հանգչեցուցած բարձի մը վըրայ, զոր թերեւս բարեկամ ձեռք մը դրած էր հոն: Գիշերն արդէն իր մութ թեւերով զրկած էր երկիրը. աստղերու բոյլը ազօտ լոյս մը կ'սրբուէր Կափառնաուով, Տիբերեայ եւ Մագդաղէի վրայ, որոնք մեռելական թմբիրով մը կ'ննջէին:

Գ.

Պաղեստինի տար գօտիին մէջ, գիշերներու սաստիկ հովերն մըրիկներ կ'պատճառէին, շատ անգամներ, այն ծովուն վրայ, որ Միջերկրականի մակերեսոյթէն վեց հարիւր ոտք ցած կ'գտնուի: Այդ գիշերն,

յանկարծ հիւսիսի կողմէն փրթաւ փոթորիկը , խռովելով ծովն ամբողջ , որ ուռած ալիքներով կ'զարնէր նաւի կողերուն : Շփոթը տիրեց նաւին մէջ : Մէկը թրջուած առագաստին կ'դիմէր ամփոփելու համար զայն , միւսը դեկին ուղղութիւնը կ'կանոնաւորէր , եւ ուրիշներ կ'ջանային անհաստատ թեւձակներով նաւը զերծ պահել ընկղմումի մը վտանգէն : Ամէն ջանք ի զուր էին սակայն , եւ ոչ որ կ'համարձակէր խռովել բունն այն Մեծ-Վաշդապետին որ Աստուծոյ խաղաղութիւնն ունէր իր մէջ : Վերջապէս , կորուստի վանէն առնուած աղիողորմ՝ ճիչերու մէջէն լսուեցաւ ձայն մը , որ կըսէր , «Վարդապետ , ոչինչ է քեզ փոյթ , զի կորնչիմք աւասիկ» : Անխռով հոգիի մը կառաքեալ վեհուեամբ Քրիստոս ուշի կանգնած նաւին վրայ , դիտելով երկնքի ծայրերն , սրբ կը գոռային կատղած հովին շփումներով , դիտելով ծովը , որ վայրագ մռնչիւններով նաւը կ'կրծէր , պարզեց իր ձեռքը , եւ աստուածային ձայնի մը ուժգին շեշտերով «Սաստեաց հողմոյն եւ ծովուն» : — Այդ ձայնին առջեւ երկինքն հանդարտած էր ու ծովը խաղաղած :

Ի .

Փոթորկայոյց աշխարհին մէջ , նաւը՝ ուր ննջած էր Քրիստոս , կը նայանայ քրիստոնէական եկեղեցիին հետ : Ընկերական ու ընդամենական փոթորիկներ կ'վտանգեն մարդկութիւնը , եկեղեցին իր ճամբան կ'շարունակէ յափտենալէս : Սին յաւակնութեամբ կուրացած միտքը , իր մէջն ու շուրջը չտեսներ քիւս Աստուծոյ զործը , իր հանգստութեան մեղի օրերուն : Երբ վտանգ մը ծանրանայ , այն ատեն միայն կորուստի ու փճացումի ցուրտ իրականութիւնը կ'խռովէ գինշը : Հաւատքն ու սէրը կ'զարթնուն իր մէջ : Յիսուսի Քրիստոսի ներկայութիւնը կ'զգայ իր մօտ , եւ կերկրագլէ անոր : Այսպէս ահա ընչերական կեանքի փոթորիկներուն մէջ , պիտի լսուի շարունակ , վտանգի մատնուած առաքեալներուն ձայնը — «Վարդապետ , ոչինչ է քեզ փոյթ , զի կորնչիմք աւասիկ» — Սոսկ հրաման մը կարող պիտի ըլլայ շղթայելու մըրկն ու ծովը . բաւական է որ աղօթքի , զարթումի ու պաղատանքի ձայն մ'ըլլայ մարդկութեան կոչը : Պաշտելութեան ձայնը թող բարձրանայ Քրիստոսով խաղաղած ծովուն վրայ , եւ այս աշխարհի մէջ հաւատքի ու կեանքի նաւն՝ այդ ձայնով լցուած՝ պիտի շարունակէ իր ճամբան , եւ օր մը ափունքն ու յաւիտենականութիւնը պիտի նոյնանան իրարու հետ : Յիսուս Քրիստոս Աստուծոյ զօրութիւնն ունի . նա տէրն է հովերուն , ծովերուն ու մարդոց ստորաբարձ կրթներուն , որոնք չպիտի կըրնան վնասել եկեղեցիին , ու պիտի ապրի յաւիտեայ , իրը մեծագոյն կոթողը քրիստոնէութեան յաղթանակին :

Ե .

Գալիլիոյ ծովակը նուիրագործուեցաւ Քրիստոսով : Անոր քարոզութիւններն ու վարդապետութիւնները , որոնք ժողովուրդին աւան-



գուեցան այդ ծովուն ափունքին վրայ. Բրիտտոսի աստուածային հրամանը, որուն առջեւ փոթորիկն հանդարտեցաւ, ամէնքն ալ ծրարուած կան հոն, այդ խորհրդաւոր ծովուն մէջ: Եւ չգիտես դեռ ինչե՞ր, որոնց լուռ հանդիսատեսն եղաւ ծովակը, որ կայուն յատակ մը դարձաւ. Բրիտտոսի ոտիցը ներքեւ, եւ որ սարսուռ զգաց Սրբոյն Պետրոսի քայլերէն:

Խորհրդաւոր ծով. խորհրդաւոր նինջ. խորհրդաւոր հանդարտութիւն:

ԻՐԱՆՈՎ, Գ.

### Ք Ա Ղ Ո Ւ Ա Մ Ք

Բրիտտոնէսիւնը իր յունական կաթնիկ կամ բողոքական պատեանին ներքեւ 400 միլիան մարդկեղէն արարածներու ատկաւն հաշկան գործաշանն է, անհրաժեշտ ջուխտ մը մեծ թեւեր՝ բարձրացնելու համար մաշոյն իր անմէն վեր, իր գեանառոյ կեանքէն եւ իր սահմանափակ հորիզոնէն վեր, առաջնորդելու համար զինքն համեկրաթեան համակամութեան եւ յոյսի մէջէն մինչեւ յստակ սեռնութեան, տաննելու համար զինքը ժողկալութենէ՝ մաշրութենէ եւ բարութենէ անդին մինչեւ անհնախրութեան: Իտալիոյ մէջ վերածնութեան ատեն, Անգլիոյ մէջ վերահաստատութեան, եւ Ֆրանսայի մէջ Համախմբութեան եւ Վարչարանի ատեն տեսնուեցաւ որ մարդն այնպէս եղաւ՝ ինչպէս էր Ա. դարուն՝ Օգոստոսի եւ Տիբերի ժամանակ՝ այսինքն, հեշտամոլ եւ կարծրասիշտ. գազանական եւ հաշուախնդիր ետականութիւնը իր ազդեցութիւնը նորէն ձեռք բերաւ, անգթութիւն եւ զգայասիրութիւն չորս կողմ կ'տարածուէին եւ չն: Երբ մէկը այս տեսարանն իր աչքին առջեւ բերէ, մօտէն՝ կրնայ արժեցնել թէ արդի ընկերութիւններու մէջ ամօթաւորութեան՝ քաղցրարարչութեան եւ մարդասիրութեան ինչ քաժին ունի քրիստոնէութիւնը եւ թէ ո՞րքան պարկեշտութիւն, անկեղծութիւն եւ արդարութիւն կ'պահէ անոնց մէջ:

Այ՛ ժողիտութեայական պատճառարանութիւնը, ո՛չ աշուեստագիտական եւ գրական մշակութիւնը, ո՛չ իսկ աւատական՝ զինուորական եւ ասպետական պատիւը, ո՛չ մէկ աշխարհական օրինադիրը, բաւական չեն ամուր ծառայութեան տեղը լեցնելու. նա՛ միայն զմեզ կրնայ պինդ բռնել մեր կեանքի գառիվայրին վրայ՝ արգիլելու համար այն անզգայի սահեցումը՝ որով անդադա՛ր՝ եւ իր սկզբնական բուսնդակ ծանրութեանը տակ՝ մարդկային ազգն ետ ետ երթալով կ'իջի իր ծանծաղուտին մէջ, ու Աւետարանը՝ որն ալ ըլլայ իր ներկայ պատեանը՝ մարդկային բնագոյմի լաւագոյն օժանդակն է տակաւին:

Թ. Է. Ն.

## ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ա.մ.ն. Ս. Պատրիարք Հայրն անձնական տկարութեան պատճառաւ չորեքշաբթի և հինգշաբթի օրերն չի կրցաւ Պատրիարքարան երթալ և իր տունը մնայ :

Քաղաքական ժողովն չորեքշաբթի իր շաբաթական նիստը կազմեց ի Պատրիարքարան և զբաղեցաւ իր օրակարգին վրայ դանուած խնդիրներով :

Նիստէն յետոյ, ժողովոյ գիւտնը Ս. Պատրիարք Հօր տունը գնաց և Ն. Ամենապատուութեան հաղորդեց ժողովին կատարած խորհրդակցութեանց արդիւնքը :

Ա.մ.ն. Ս. Պատրիարք Հայրն , համար 297 պաշտօնադրովն բարեհաճած է շնորհաւորել Դպրեմանուց անդրանիկ Սաներուն գաւազանի իշխանութիւն և վարդապետութեան աստիճան ընդունիլը : Ն. Բ. Սրբադնութիւն կը գրէ . « Կը շնորհաւորենք զիրենք և օրհնութեամբ հանգերձ կը բարեմաղթենք , որ ամենազօր Հոգին Ս. Աստուած պարգեւէ անոնց շնորհ և իմաստութիւն քարոզելու ի լուր ժողովրդեան զբանն կենաց , և արժանաւորէ ի պատշաճ ժամանակին ծայրագոյն իշխանութեան մեծի վարդապետութեան , օգուտ Ուղղափառ սրբոյ Հայ. Եկեղեցւոյս և ի հոգեւոր շինութիւն հաւատացելոց ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր » :

Մայր Աթոռոյ Դէորդեան Ճեմարանին ընթացաւարտ Սաներուն , եւրոպական համալսարանաց մէջ բարձրագոյն ուսմանց կատարելագործութիւն ստանալու ծրագրին նոր ընդարձակութիւն տրուած է , մօտ օրերս

կատկուած քառասուն հազար ռուբլի գումարին տոկոսը այդ նպատակին յատկացնելով:

Արդէն ծանօթ են Արժ. Տ. Կարապետ վարդապետ Տէր Մկրտչեան, և Պ. Արշակ Տէր Միքէլեան, որք երեք տարի մնալով և Գեղի համալսարանական աստիճան ստանալով վերադարձան:

Բարենչ. Գարեգին Սարկաւազ Յովսէփեան, որ երեք տարիէ ի վեր Գերմանիա կը գտնուէր աստուածաբանութեան համար, մօտերս պիտի դառնայ, և ճեմարանի մէջ ուսուցչութեան պիտի կոչուի:

Այս օրերս նորէն զրկուողներն եղած են:

Տ. Յուսիկ վարդապետ Զօհրաբեան Մեծսալացի, Գերմանիա դադած է յատկապէս Ս. Գրոց ուսման համար:

Տ. Կոմիտաս վարդապետ Սողոմոնեան Կուտինացի, Գերմանիա դադած է եկեղեցական երաժշտութեան համար:

Տ. Բենիկ վարդապետ Եղիազարեան Ապարանցի, Օտեսայի համալսարանը դադած է ռուսական գրագիտութեան համար:

Տ. Եղնիկ վարդապետ Գեանջեցեան Շուշեցի, Մոսկուայի համալսարանը պիտի երթայ, աստուածաբանական գիտութեանց համար:

Մուշեղ Սարկաւազ Շուշեցի, պիտի երթայ ի Գերմանիա, նոյնպէս աստուածաբանութեան համար:

Իսկ ցաւալի է Պ. Յովհաննէս Խաչումեանի յուսանքի և եռանդուն երիտասարդին վաղահաս մահը, որ երեք տարիներէ ի վեր Գերմանիա կը գտնուէր, և Անդրիա և Ամբրիկա ալ ճանապարհորդած էր և Էջմիածին դառնալով կուսակրօն եկեղեցականութիւն ընդունելու կը պատրաստուէր: Բնիկ Շուշեցի էր. Լալացիկի հիւանդանոցին մէջ հիւծախտէ վախճանած է մայիսի առաջին եօթնեկին մէջ:

Երուսաղէմայ Պատրիարք Ամեն. Տ. Յարութիւն Սրբազան յատուկ պաշտօնագրով շնորհակալութիւն յայտնած է , Դպրեւանսոց Միաբանութեան կողմանէ հանգուցեալ Սիմէան արքեպիսկոպոսի համար կատարուած ութօրէից պաշտօնին համար , մաղթելով եւս որ «Լրկին Ուխտերու եղբայրական սէրը միշտ աճեցուն և յարատեւ մնայ» :

Ռուսիոյ Կայսեր ււ Կայսրուհւոյն թագադրութեան հանդէսին՝ ամենայն հայոց հայրապետին կողմէ ներկայ դանուող հոգեւորականներէն Գեր. Երեմիա արքեպիսկոպոսին ականակաւ խաչ և Գեր. Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանին շքանշան նուիրուեր է Չարին կողմէ : Նոյնպէս շքանշան մը և տառիճանի բարձրացում՝ Թիֆլիզի քաղաքադուխ Սրբութեան իշխանին , որուն դռնապանը՝ իշխանուհի Վառվառէ Արղութեան՝ Կայսրուհւոյն պատուակալ օրիորդ նշանակուեր է :

Բաղմութիւ ռուսահայ զօրավարներ և սպաներ շքանշան և տառիճանի բարձրացում տապեր են թագադրութեան հանդէսին առթիւ :

Թիֆլիզ քաղաքին կողմէ ի Մոսկուա ներկայ գլխաւոր պատգամաւորութիւնն ամբողջովին հայերէ բաղկացած էր :

Կրօնական ժողովն իր վերջին նիստին մէջ նկատուլութեան առաւ Տարտանէլի եկեղեցւոյն Տ. Գէորգ քահանայի մեղադրութիւնը : Այդ քահանան Մեծ Պահոց մէջ պատկի արարողութիւն կատարած ըլլալուն համար փրկնալրկութեան դատապարտուած էր : Ժողովն որոշեց գրել Ռոստոթոյի պատրիարքական փոխանորդ Պաղճեան Տ. Բարթուղիմէոս վարդապետի որ Կրօնական ժողովոյ ներման որոշումը հաղորդէ նոյն քահանային , յորդորելով միանգամայն որ զգուշանայ ուրիշ անգամներ նմանօրինակ թերութեանց մէջ դանուելէ :



## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԳԼԻԱ. — Լորա Սալզպլըրիի նախարարութեան համար բացարձակ պարտութիւն մը եղաւ կրթական ծրագրին մենչեւ յաւնուար ետ թողուիլը: Ո՛չ միայն Ազատականք կը հրճուին, այլ և քիչ չափ անկախ նախարարական թերթեր կը ցուին նախարարական անյաշուրթեան համար. զի վիճաբանութեանց ընթացքն հաստատեց թէ նախարարներն իրենք կատարեւորէս համամիտ չէին այն առաջարկութեանց մասին զորս Խորհրդարանին բերած են, ի մասին վերակազմութեան նախադրութեան ու միջնակարգ կրթութեան:

— Կ. Պոլսոյ գեսարան Սըր Ֆելիք Քըրրիի առողջական վիճակը բարւոքեր է, և անցեալ շաբթուն իւր գլուղային բնակարանը գացեր է՝ բոլորովին կազդուրուելու համար:

ՌՈՒՍԻԱ: — Ի Մոսքուա քննութիւնը յառաջ կը տարուին այն մեծ գաղտնատանին համար որ ի մօտոյ տեղի ունենայ, և որով երեւան պիտի հանուին և պիտի պատժուին անոնք որոց անհոգութեամբ կամ զանցառութեամբ պատահեցաւ Խոտինսքոյի հրապարակին ողբալի արկածն, որոյ զոհերն 5,000 էն աւելի են արդէն:

ՄԻԱՅԵԱՆ ՆԱՀԱՆԳԻ. — Հանրապետական կուսակցութեան իւրաքանչիւր նահանգէ ընտրուած պատուիրակներէն բաղկացեալ Համաժողովն, որ ի Սէն Լուի դումարեցաւ, Նախագահութեան համար ընտրելի նշանակեց զՊ. Մաք Քինլի, հռչակաւոր պետը մարտապաշտ կուսակցութեան:

ՊԱՊԸ Ժամանակէ մ'ի վեր ուրիշ բանի չի զբաղիր եղեր բայց եթէ լատիններէն մեծ կոնդակի մը խմբագրութեան , որոյ նպատակն է պաշտպանել Հռոմայ Պապին գերադահութիւնն : Առ այս զանազան քաղաածներ ըրեր է Պապն յոյն հայրապետներէն և արեւելեան ժամագիրքերէն : Պապն ամեն Եկեղեցիներու պիտի զրկէ այս շրջաբերական , որպէս զի կարգան . և համադրուելով Պապին գերադահութեան , յարին Հռոմայ Եկեղեցւոյն , որով Եկեղեցեաց միութիւնը կառարեալ պիտի ըլլայ եղեր : Հիմա Պապն այն գիրը շատ մը լեզուներու թարգմանել կուտայ : Անգլիներէն լրագիրք որը այս ըսորը կուտան , կը յարեն թէ միութիւնը փոխադարձ զիջումներով կ'ըլլայ , մինչ այսպիսի առաջարկ մը հպատակութեան կոչում մ'է և ոչ թէ միութեան , և դարաւոր դոյսութիւն ունեցող Եկեղեցիներէն ո'չ մին տրամադիր է իւր ինքնութիւնն ուրանարով Հռոմայ հպատակելու :

ՃԱՅՈՒՆԻ Վերջին երկրաշարժը կրնայ ըսուիլ թէ ո'չ միայն ցամաքի այլ և ծովու վրայ տեղի ունեցաւ : Լեւրան պէս կոհակներ ցամաքին վրայ եկան , և քաղաքներ ու գեղեր կոխեցին : Անոնք որ երկրաշարժէն ազատ մնացին , կոհակներու զոհ եղան , ու փոխադարձաբար : Այս ծովային շարժում եօթանասուն միլոն երկայնութեան մը վրայ տեղի ունեցաւ , շատ մը քաղաքներ կործանեցան , և մարդու կորուստը չափաւոր հաշիւով մը 10,000 էն աւելի կը կարծուին :

ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ. — Վեներուելացի հրոսակներ սահմանագլխէն անցնելով մասն անդլիական Կիւյանա : Արիւնուշա կռիւ մը տեղի ունեցաւ այս վեներուելացիներուն և անդլ. զաղթականներուն կամ հպատակներուն մէջ :

# Թարգմանութիւն Կ. Ս. Իւթիւնեանի

## ԶԵՂԶԵԱԼ ԳԻՆԵՐ

|                                           | Zaisur | Դրուց |
|-------------------------------------------|--------|-------|
| Թափառական Հրեայ (Էօթէն Սիւ)               | 4      | 50    |
| Հնտանեզուրկ (Էքթօր Սալոյ)                 | 2      | 12    |
| Կարմիր Մարդոց Երդումը (Բօնսօն տիւ Թէրայլ) | 2      | 10    |
| Կրանթ Նաւապետին որդիքը (ժիււ վէրն)        | 3      | 15    |
| Հինգ շաքամ օդապարիկով »                   | 2      | 12    |
| Ամուսնութիւնք Փարիզի (Էտմոն Սպու)         | 1      | 5     |
| Զիկազակ (Ֆօրթիւնէ տը Պուակօպէ)            | 1      | 5     |
| Տիկիին վիֆէրոն որդի (Էտոն տը Թէնսոյ)      | 1      | 5     |
| Սկզբունք քաղաքական անտեսութեան (ժօ-       |        |       |
| գէֆ Կառնիէ)                               | 1      | 3     |
| Պատժ. Օրինագիրք Սամ. Պետութեան            | 1      | 2     |
| Սրկածք Միւնխաւզէն Պարոնի                  | 1      | 2     |

Կեդրոնատեղին է ՊԱՂՏԱՏՂԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ ԿՈՒԼ  
Թան Համամ Թիւ 14:

## Ա Տ Ա Մ Ն Ա Բ Ո Յ Ժ

ՏՈՒԹ. Յ. ԱՐԱՊԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել թէ հինգշաբթի օրերն կա-  
տարած ձրի խորհրդակցութիւնները, յետապտորիկ, տեղի  
պիտի ունենան ժամը 5 էն մինչեւ 11 ըստ Թրքաց:

ՇԱՆԹԱՐԳԵԼ

ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ԶԱՆԳԱԿ

ԵՒ ՈՐՈՇ ԱՄԵՆ ՏԵՍԱՆ ԱՂԵՏՐԱԿԱՆ ԴՈՐՈՒՄ

ԱՆՕՐԻՆԱԿ ԱԺԱՆ

ԸՆՏԻՐ ԱՊՐԱՆՔ, ԽՆԱՄԵԱԼ ԱՅԽԱՏՈՒԹԻՒՆ

1890ԻՆ ՀԻՄՆՈՒԱԾ ՏՈՒՆ

Ս. Վ. Ա. ՃԷՄԵԱՆ ԵՂԵԱՐՔ

ՅԱՆՁՆԱՌՈՒ—ԵԼԵԿՏՐԱԳԵՏԻ. ՀԱՅՍՏՅԻՁՔ ՊԵՏՈՒԳԵԱՆ

14 ԵՆ 19, ԶԻՎԵՐ ՊԵՂ ՍԱՆ, 14 ԵՆ 19

ՔԻՐԵՔՏԻՐ — ԿԱԼԱՅ

ՏՈՒՔԹ. ՇԻՐԻՆԵԱՆ

ԲԺԻՇԿ, ՎԻՐԱԲՈՅԺ ԵՒ ՄԱՆԿԱՐԱՐԶ

Վկայեալ ձիւստէլֆիոյ եւ Նիւ Լորքի համալսարաններէն, երեք տարի հիւանդանոցաց մէջ ծառայած, յետ տասն եւ հինգ ամեայ փորձառութեան, իւր բնակութիւնը հաստատած է Բերա, Սագըզ Աղաս փողոց թիւ 47 տունը, ուր կ'ընդունի հիւանդ ամէն օր ժամը 7-11. Երեքշաբթի եւ ուրբաթ օրերը ձրի կը դարմանէ իրեն դիմողները, իսկ շաբաթ օրերը ժամը 7էն մինչեւ 9ը կը գտնուի Պօլիս Քիւլ-չիւքեան եղբարց դեղարանը: Կը դարմանէ ամեն հիւանդութիւնք, մասնաւորապէս սրտի եւ կուրծքի եւ կը կատարէ ամեն կարգի վիրահատական գործողութիւնք:

ԱՐՏՕՆԱՏԷՐ

Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ